Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
հուլիսի 30-ի թիվ 127-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

I. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 5

II. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14

1. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ 17

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ 18

3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 19

4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

5. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ 19

6. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ 19

7. ՊԵԿ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 20

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 20

9. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ 21

10. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՆՈՒՄ 21

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 22

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 76/Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեպտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919 որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. մարտի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020թ. հունիսի 8-ից մինչև 2020թ. հուլիսի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

I. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները հատատատվել են 1,695,009,852.1 հազ. դրամ գումարի չափով, որից՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է 1,602,252,712.8 հազ. դրամ, պաշտոնական դրամաշնորհները՝ 35,324,420.2 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 57,432,719.1 հազ. դրամ:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների և 2018, 2019 թվականների ժամանակաշրջանների համադրելի գումարները համեմատականը հետևյալն է՝

(Աղյուսակ 1)

Եկամտատեսակը	2018թ.		2019թ.		2020թ.	
	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը
Ընդամենը, որից՝	**1,341.7**	**100.0%**	**1,565.5**	**100.0%**	**1,695.0**	**100.0%**
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,258.1	93.8%	1,464.3	93.5%	1,602.3	94.5%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	11.2	0.8%	12.4	0.8%	35.3	2.1%
3. Այլ եկամուտներ	72.3	5.4%	88.8	5.7%	57.4	3.4%

Հաշվի առնելով, որ ՊԵԿ կողմից գանձվելիք մաքսավճարը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն դասակարգվել է որպես պետական տուրք, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի աղյուսակում և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ, որով հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը ավելացվել է 5,500.0 մլն դրամ գումարով և նույն չափով նվազեցվել է այլ եկամուտների գումարը:

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության 2019 թվականի 26 դեկտեմբերի N 1919-Ն որոշմամբ (Հավելված 2) Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների հավաքագրման եռամսյակային բաշխումն՝ ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի հաստատվել է հետևյալ համամասնությամբ.

(Աղյուսակ 2)
հազ.դրամ

Եկամտատեսակ	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Պետական բյուջեի եկամուտներ	**357,837,487,8**	**808,147,342,6**	**1,218,708,774,8**	**1,695,195,470,0**
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	340,093,394,2	770,271,300,7	1,160,072,837,0	1,607,752,712,8
Պաշտոնական դրամաշնորհներ	5,437,007,9	12,563,487,6	19,781,603,8	35,510,038,1
Այլ եկամուտներ	12,307,085,7	25,312,554,3	38,854,334,0	51,932,719,1

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում ներառվել են նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում պետական բյուջեում կատարված փոփոխությունների արդյունքում 2020թ. պետական բյուջեի եկամուտների տարեկան և եռամսյակային ճշտված ծրագրային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար **1,700.1 մլրդ դրամ** և **362.7 մլրդ դրամ:**

2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով պետական բյուջեի եկամուտների ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 3)
մլրդ.դրամ

Բյուջեի եկամուտներ	Եռամսյակի ճշտված պլան	Փաստ		Կատարման տոկոս պլանի նկատմամբ
		Գումար	Տեսակարար կշիռ	
Ընդամենը	**362.67**	**370.28**	**100%**	**102.1** %
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	342.7	349.0	94.3%	101.8%
Պաշտոնական դրամաշնորհ	5.4	1.8	0.5%	-66.7%
Այլ եկամուտներ	14.5	19.4	5.2%	134.0%

Պետական բյուջեի եկամուտների 94.3%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 5.2%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով 2020 թվականի առաջին եռամսյակում ապահովվել է 349 մլրդ դրամ գումարի փաստացի եկամուտներ՝ 101.8%-ով ապահովելով ՀՀ կառավարության եռամսյակային ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշը:

ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների 2020թ. առաջին եռամսյակի և նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատական ցուցնիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 4)
մլն.դրամ

ՀՀ	Ցուցանիշ	2019թ.		2020թ.		
		Հունվար-մարտ	տեսակ. կշիռը	Հունվար-մարտ	տեսակ. կշիռը	Աճի տեմպը %
1	2	4	5	6	7	8
1	Ընդամենը վճարված հարկային եկամուտներ և պետական տուրք	292,681.2	x	322,000.7	x	110.0%
1.1	ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրք	299,652.8	100.0%	349,034.4	100.0%	116.5%
1.1.1	ԱԱՀ, այդ թվում՝	110,145.7	36.8%	119,340.2	34.2%	108.3%
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	20,637.3	6.9%	24,631.5	7.1%	119.4%
1.1.2	Շահութահարկ	19,503.1	6.5%	37,885.4	10.9%	194.3%
1.1.3	Եկամտային հարկ	95,767.5	32.0%	109,431.3	31.3%	114.3%
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում՝	23,402.9	7.8%	27,211.0	7.8%	116.3%
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	4,165.3	1.4%	3,879.0	1.1%	93.1%
1.1.5	Շրջանառության հարկ	7,425.0	2.5%	8,931.0	2.6%	120.3%
1.1.6	Արտոնագրային հարկ	1,117.5	0.4%	20.1	0.0%	1.8%
1.1.7	Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	7,026.8	2.3%	7,956.4	2.3%	113.2%
1.1.8	Մաքսատուրք, այդ թվում՝	18,737.2	6.3%	16,872.6	4.8%	90.0%
1.1.8.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	16,813.1	5.6%	16,510.1	4.7%	98.2%
1.1.9	Սոցիալական վճար	4,766.0	1.6%	5,828.1	1.7%	122.3%

1.1.10	Այլ հարկային եկամուտներ	3,936.7	1.3%	5,819.1	1.7%	147.8%
1.1.11	Պետական տուրք	8,048.4	2.7%	9,874.0	2.8%	122.7%
1.1.12	Հարկերի անցումային գերավճար	-224.1	-0.1%	-134.7	0.0%	-
1.2	Միասնական հաշվի մնացորդ (շարժ)	-6,971.6		-27,033.7		-

2020 թվականի առաջին եռամսյակում ըստ ՊԵԿ կողմից ներկայացված հաշվետվության, ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 349 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշի 101.8%-ը: 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն և պետական տուրքերն աճել են 16.5%-ով կամ 49.4 մլրդ դրամով, մասնավորապես՝

- 34.2%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 119.3 մլրդ դրամ, որից 64.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 24.6 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 55 մլրդ դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից:

- 31.3%-ը ապահովվել է եկամտային հարկի հաշվին՝ կազմելով 109.4 մլրդ դրամ:

- 10.9%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 37.9 մլրդ դրամ:

- 7.8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 27.2 մլրդ դրամ:

- Մասնավորապես՝ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 17.8 մլրդ դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 9.4 մլրդ դրամ: Նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ակցիզային հարկի գծով եկամուտները աճել են 16.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում ակցիզային հարկի դրույքաչափերի աճով և նոր դրույքաչափերի հաստատմամբ:

- 4.8%-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 16.9 մլրդ դրամ:

- 2.6%-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 8.9 մլրդ դրամ:

- 1.7%-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին՝ կազմելով 5.8 մլրդ դրամ:

- 2.3%-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 8 մլրդ դրամ: Մուտքերից շուրջ 5.1 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին:

- 1.7%-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 5.8 մլրդ դրամ, մասնավորապես՝ 2.1 մլրդ դրամ կազմել են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 1.9 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 594.2 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները, 438.2 մլն դրամ՝ ճանապարհային հարկը, 301.2 մլն դրամ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 210.8 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 20.1 մլն դրամ՝ արտոնագրային հարկը:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից միասնական հաշվին վերադարձված գումարը կազմել է 134.7 մլն դրամ:

- 2.8%-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին՝ կազմելով 9.9 մլրդ դրամ: Վճարված պետական տուրքերը կազմել են եռամսյակային ծրագրի 97.9%-ը: Մասնավորապես՝ ավելի քան 3.8 մլրդ դրամ են կազմել օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, 3.1 մլրդ դրամ՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ ու արտոնագրեր (թույլտվություններ) տալու և շուրջ 1.4 մլրդ դրամ՝ պետական գրանցման համար գանձվող տուրքերը, որոնք առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշն ապահովել են համապատասխանաբար 108.1%-ով, 88%-ով և 108.3%-ով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պետական տուրքի գծով մուտքերն աճել են 22.7%-ով կամ 1.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու ու օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող տուրքերի աճով՝ համապատասխանաբար 77.1%-ով (1.4 մլրդ դրամով) և 18%-ով (588.4 մլն դրամով): Լիցենզավորման ենթակա

գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է 2020 թվականի փետրվարի 1-ից մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի սահմանմամբ, որի գծով հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել է 759.9 մլն դրամ՝ 55.3%-ով ապահովելով առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշը: Բացի այդ, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճել են նաև բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների ու տրանսպորտի բնագավառներում գանձվող տուրքերը՝ համապատասխանաբար 5.9 անգամ (234.2 մլն դրամով) և 10.4 անգամ (219.4 մլն դրամով): Իսկ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող տուրքերի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար գանձվող տուրքերի 3.2 անգամ (554 մլն դրամով) աճով:

Համաձայն ՀՀ ՊԵԿ կողմից հրապարակված հաշվետվությունների, ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների համաձայն 2020թ. առաջին եռամսյակի և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, ինչպես նաև վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 5)
մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2019թ.	2020թ.	
		Հունվար-մարտ	Հունվար-մարտ	Աճի տեմպ %
1	2	4	6	7
1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	15,015,782.5	17,927,244.9	119.4
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	9,820,850.8	13,792,085.9	140.4
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	145,137.9	86,206.6	59.4
4	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	1,558,546.5	2,796,636.0	179.4
5	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**26,540,317.7**	**34,602,173.4**	**130.4**

2020թ. առաջին եռամսյակում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 17,927.2 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 19.4 տոկոսով, նմանապես՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը , նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի են 40.4 տոկոսով: Ի տարբերություն ԱԱՀ-ի մասով վերը նշված փոխհատուցված գումարների, ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել են 59.4 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19-ի հանգամանքով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 79.4 տոկոսով:

2020 թվականի առաջին եռամսյակում ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

(Աղյուսակ 6)

Բյուջե մուտքերը ըստ եկամտային հաշիվների. հազ. դրամ

Ժամանակահատված	Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր	Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր	Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ	Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ
2020թ. 1-ին եռամսյակ, այդ թվում՝	**303,478,601**	**15,649,689**	**65,095,549**	**384,223,840**
Հունվար	133,445,780	5,965,293	21,214,740	160,625,812
Փետրվար	67,231,868	4,352,398	21,001,219	92,585,485
Մարտ	102,800,953	5,331,999	22,879,590	131,012,542

(Աղյուսակ 6.1)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները. հազ. դրամ

Ամիս	Անցումային գերավճարից վերադարձ միասնական հաշվին	Դեբետային գերավճարից վերադարձ հարկատուներին, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությունների համաձայն վերադարձված	Վարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսներ	ԱԱՀ-ի վերադարձ (Tax free)	Այլ ելքեր	Ընդամենը հարկերից վերադարձների գումարը
Հունվար	56,203	13,420,945	358,516	25,973	65,463	13,927,099
Փետրվար	27,404	5,155,686	2,009,365	15,212	73,812	7,281,479
Մարտ	51,140	13,429,330	416,063	45,022	39,254	13,980,809
Ընդամենը	**134,747**	**32,005,961**	**2,783,944**	**86,207**	**178,529**	**35,189,387**

2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

(Աղյուսակ 6.2)

հազ. դրամ

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	Հունվար	Փետրվար	Մարտ	2020թ. 1-ին եռամսյակ
	146,698,713	85,304,007	117,031,733	**349,034,453**

II. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 98,713,646.4 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 101,275,862.0 հազ. դրամ, իսկ 2020թ. առաջին եռամսյակի ճշտված պլանը՝ 27,382,353.8 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 26,864,738.6 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 26,681,629.9 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 25,912,793.1 հազ.դրամ:

ՀՀ ՊԵԿ 2020թ. առաջին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականը ըստ ծրագրերի հետևյալն է.

(Աղյուսակ 7)

հազ. դրամ

Ծրագիր (հոդված)		Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը	Պլանի մնացորդ
ԸՆԴԱՄԵՆԸ		**27,382,353.82**	**26,864,738.59**	**26,681,629.9**	**25,912,793.09**	**97.44**	**517,615.23**
01010201	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	3,551,581.1	3,186,794.71	3,005,194.79	3,688,889.58	84.62	364,786.39
	Աշխատանքի վարձատրություն	2,799,455.6	2,798,954.20	2,638,769.89	3,339,954.60	94.26	501.40
	Ծառայությունների եվ ապրանքների ձեռքբերում	729,146.7	370,282.31	352,114.77	345,015.20	48.29	358,864.39
	Այլ ծախսեր	22,978.80	17,558.20	14,310.13	3,919.78	62.28	5,420.60
01010203	Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	749,088.00	749,088.00	749,088.00	322,117.42	100.00	-
01010206	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում	109,332.50	13,124.00	13,124.00	13,124.00	12.00	96,208.50
	Վարչական սարքավորումներ	35,999.20	13,124.00	13,124.00	13,124.00	36.46	22,875.20
	Այլ մեքենաներ և սարքավորումներ	73,333.30	-	-	-	-	73,333.30
01010207	Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսեր	1,905,120.00	1,905,120.00	1,905,120.00	887,600.02	100.00	-
01010211	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում	3,800.0	-	-	-	-	3,800.00
	Նախագծահետազոտական ծախսեր	3,800.0	-	-	-	-	3,800.00
01010212	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում	400.0	-	-	-	-	400.00
	Նախագծահետազոտական ծախսեր	400.0	-	-	-	-	400.00
01060104	Փորձաքննությունների ծառայություններ	2,711.8	-	-	-	-	2,711.80

04090120	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	55,102.3	55,102.30	55,102.30	55,102.30	100.00	-
09050211	Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններ	37,602.8	37,602.80	37,602.80	29,084.00	100.00	-
10020110	Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում	18,658,142.0	18,619,961.46	18,619,650.69	18,619,650.69	99.79	38,180.54
10090201	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	39,528.0	28,000.00	26,802.00	26,802.00	67.81	11,528.00
10090226	Փոխանցումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին	2,269,945.32	2,269,945.32	2,269,945.32	2,269,945.32	100.00	-
11010101	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-	477.76	-	-

1. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագրի շրջանակներում հակային և մաքսային ծառայություններ միջոցառման մասով 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 20,012,049.3 հազ. դրամ գումար, 2020թ. առաջին եռամսյակի պլանը կազմել է 3,546,160.5 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 3,551,581.1 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 3,005,194.8 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 546,386.3 հազ. դրամ:

Մասնավորապես՝ սույն ծրագրի շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 8)

հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	**2020թ. առաջին եռամսյակի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղի ծախսը**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը 6=4/2 x100%**	**Պլանի մնացորդ 7=2-3**
1	2	3	4	5	6	7
Ընդամենը	**3,551,581.1**	**3,186,794.7**	**3,005,194.8**	**3,688,889.6**	**84,6**	**364,786.4**
Աշխատանքի վարձատրություն	2,799,455.6	2,798,954.2	2,638,769.9	3,339,954.6	94.3	501.4
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	729,146.7	370,282,3	352,114.8	345,015.2	48.3	358,864.4
Այլ ծախսեր	22,978.8	17,558.2	14,310.1	3,919.8	62.3	5 420.6

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է 3,339,954.6 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 2,638,769.9 հազ. դրամ, աշխատանքի վարձատրության մասով առաջին եռամսյակի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմում է 713,940.3 հազ. դրամ, աշխատողների թվաքանակը 2020թ. 1-ին եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 3093 մարդ, ներառյալ շուրջօրյա հերթափոխով աշխատողները:

Աշխատանքի վարձատրության գծով ծախսի (դրամարկղի ծախսի) կատարողականը կազմել է 94.3 տոկոս:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականները համապատասխանաբար կազմել են 48.3 տոկոս և 62.3 տոկոս, եռամսյակի ճշտված պլանի համեմատ տարբերությունը հիմնականում պայմանավորված է մարտ ամսին նախատեսված որոշ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման մրցույթների COVID-19-ի հետևանքով հետաձգվելու հանգամանքով:

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների ձեռքբերման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի ցուցանիշները հետևյալն են.

(Աղյուսակ 9)
հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2020թ. առաջին եռամսյակի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը 6=4/2 x100%
1	2	3	4	5	6
Ընդամենը	**2,654,208,0**	**2,654,208,0**	**2,654,208,0**	**1,209,717,4**	**100,0**
Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	749,088,0	749,088,0	749,088,0	322,117,4	100,0
Դրոշմապիտակների ձեռքբերում	1,905,120,0	1,905,120,0	1,905,120,0	887,600,0	100,0

Նշված ծրագրերով ծախսերի (դրամարկղի ծախսի) կատարողականը կազմել են 100 տոկոս, փաստացի ծախսերը ակցիզային դրոշմանիշների մասով կազմել է 322,117.4 հազ. դրամ, իսկ դրոշմապիտակների մասով՝ 887,600.0 հազ. դրամ, իսկ ձեռքբերումները համապատասխանաբար կազմել են 1,152,720.0 հազ. դրամ և 2,228,990 հազ. դրամ:
Սույն ծրագրերի մասով 2020 թվականի առաջին եռամսյակում ձեռքբերումները ՊԵԿ կողմից պայմանավորվել են «COVID-19-ով՝ «ալկոհոլային դրոշմանիշերը հնարավորինս շատ պահեստավորելու համար 1-ին եռամսյակում ձեռք են բերվել ավելի շատ, քան նախատեսված էր: Ձևավորված կրեդիտորական պարտքը մատակարարին կվճարվի հաջորդ եռամսյակներում»:

3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում միջոցառման շրջանակներում ծախսերի կատարողականը կազմել է 100 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանի պլանը, ֆինանսավորումը և դրամարկղի ծախսերը կազմել են 37,602.8 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 29,084.0 հազ. դրամ:

4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձաքննությունների ծառայությունների ծրագրով 2020թ. առաջին եռամսյակի պլանը կազմել է 2,711.8 հազ. դրամ, սակայն այս ծրագրով շրջանակներում ծախսեր չեն կատարվել, ինչը պայմանավորված է եղել COVID-19-ի հետևանքով մարտ ամսին նախատեսված թվով շուրջ 136 հատ պատվեր-հայտերը ՊԵԿ կողմից չներկայացնելու հանգամանքով:

5. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների գծով ծախսերը կազմել են 55,102.3 հազ. դրամ, կատարողականը կազմել է 100 տոկոս:

6. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում ծրագրի շրջանակներում ռենտգենային սարքավորումների տեխնիկական սպասարկում միջոցառման մասով ծախսերի 2020թ. տարեկան և առաջին եռամսյակի պլանային ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 1,764,914.0 հազ. դրամ և

109,322.5 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 13,124.0 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը ՊԵԿ կողմից հիմնավորվել է, COVID-19-ով պայմանավորված՝ ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վճարահաշվարկային փաստաթղթերի դեռևս չներկայացման և նախատեսված թվով 290 հատ համակարգիչների ձեռքբերման ժամանակավորապես հետաձգման հանգամանքներով: 13,124.0 հազ. դրամ դրամարկղի և փաստացի ծախսի կատարումը պայմանավորված է 210 միավոր գրասենյակային գույքի և 100 միավոր գրասենյակային սարքավորումներ ձեռքբերումներով:

Հաշվեքննության ավարտի դրությամբ 19.01.2020թ. կնքված ռենտգենային սարքավորումների տեխնիկական սպասարկման թիվ ՀՀ ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-2019/2 պայմանագրի շրջանակներում պետական գնումների էլեկտրոնային հարթակի (PPCM) պայմանագրեր բաժնում ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման արձանագրություններ, հարկային հաշիվներ տեղակայված (ներբեռնված) չեն:

7. ՊԵԿ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՊԵԿ շենքային ապահովվածության բարելավում միջոցառման համար 2020թ. տարեկան և առաջին եռամսյակի պլանները համապատասխանաբար կազմել են 38,000.0 հազ. դրամ և 3,800.0 հազ. դրամ գումար, իսկ ՊԵԿ շենքային պայմանների բարելավում միջոցառման մասով համապատասխանաբար՝ 94,348.5 հազ. դրամ և 400.0 հազ. դրամ գումար: COVID-19-ով պայմանավորված նշված միջոցառումների մասով հաշվետու եռամսյակում ծախսեր չեն կատարվել:

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շրջանակներում ՊԵԿ աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար 2020թ. պետական բյուջեի տարեկան և առաջին եռամսյակի ճշտված պլանները համապատասխանաբար կազմել են՝ 237,168.0 հազ. դրամ և 39,528.0 հազ. դրամ: 2020թ. առաջին եռամսյակի դրամարկղի ծախսը կազմել է 26,802.0 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմում է 12,726.0 հազ. դրամ գումար կամ ճշտված պլանի 68%-ը:

Շահառուների նախատեսված քանակը կազմել է 3294 աշխատակից, սակայն սոցիալական փաթեթից օգտվել են 2247 աշխատակից, նախատեսված քանակից 1047 աշխատակցով պակաս, որը համաձայն ՊԵԿ կողմից ներկայացված հաշվետվության, պայմանավորված է աշխատողների աշխատանքի ընդունման վեց ամիսը լրացած չլինելու և շահառուների ցանկում չընդգրկվելու, ինպչես նաև մի շարք աշխատողների կողմից դիմումներ չներկայացնելու հանգամանքներով:

9. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասով 2020թ. պետական բյուջեի առաջին եռամսյակի ճշտված պլանը, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը համապատասխանաբար կազմել են 2,269,945.32 հազ. դրամ:

Վճարումները կատարվել են ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման կողմից տրամադրված՝ փաստացի վճարումների անհատականացված տվյալների հիման վրա:

10. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՆՈՒՄ

Կենշաթոշակային ապահովվածություն ծրագրի շրջանակներում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում միջոցառման մասով 2020 թվականի տարեկան և առաջին եռամսյակի պլանները կազմել են համապատասխանաբար՝ 70,007,556.2 հազ. դրամ և 18,658,142.0 հազ. դրամ գումար, դրամարկղի և փաստացի ծախսերի գումարը կազմել է 18,619,650.7 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 38,491.3 հազ. դրամ, մասնակիցների պլանային թվաքանակի՝ 345 467 մարդ, համեմատ փաստացի ցուցանիշը համաձայն ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման ամփոփած տվյալների (փաստացի վճարումների անհատականացված տվյալների) կազմել է 364,472 մարդ՝ 19,005 միավորով պակաս:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 2-րդ մասի 6-րդ կետի 3-րդ պարբերության մասով հայտնում ենք, որ 19.01.2020թ. կնքված ՀՀ ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-2019/2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում 2020 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ծառայության մատուցման հանձնում և ընդունում չի իրականացվել, այսինքն՝ Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտ չի ստորագրվել և գումար չի փոխանցվել, հետևաբար նման տեղեկատվություն առկա չի եղել պետական գնումների էլեկտրոնային հարթակում (PPCM):

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայցվել է պարզաբանում:

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել: